ԱՐԱՐԱՏ

ԼՐԱԳԻՐ ԱԶԳԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆ ԵՒ ԱՅԼՆ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԻՒՆ

Պարսկաստանի համար տարեկան 5 ֆր. և կամ 2 րբլ. 50 կ. թղթդրմ.
Ուրիշ ամեն տեղի համար ուր այս լրագրի մուտքը արգիլուած չէ, տարեկան բաժնորդագինն է 20 ֆր., վեցամսեայն 10 ֆրանգ և եռամսեայն 5 ֆրանգ։

Բաժնեգիները կանխիկ կը վճարուին և ցնօրէնութիւնն ինք կը վճարէ լրագիրը ղրկելու փոստի ծախքը։

Նամակ և ծրար պէտք է ղրկել հետեւեալ հասցէով. M. PORTOUKALIAN, rédacteur du journal *Arménia*. MARSEILLE (France)

Ը ՏԱՐԻ ԹԻԻ 2

1892 ՕԳՈՍՏՈՍ 24

ՕԳՈՍՏՈՍ 12 (Հ. Տ.)

ՀՈՐՆԳԱՏԱԹԻ

Կրհրատարակութիւնը, և Երթ. օրեր

ԳԱՅՄԱՆՆԵՐ

Խմբագրութիւնը, եթէ հարկ համարի, համառօտելով և կամ մասամբ միայն կրհրատարակէ իրեն ղրկուած գրութիւնները։
Պարտաւոր չէ վերադարձնել չհրատարակուած ձեռագիրները։
Յանուցումներ կրնդունուին հայերէն և ֆրանսերէն լեզուներով։
Յանուցման 1 միջակ գիրը 1 սանդիմ կարժէ. 1 գլխագիրը 2 սանդիմ։

Les annonces, en français et en arménien, sont reçues aux bureaux de Rédaction (Allées de Meilhan, 44.)

ՀԱՅՈՑ ՀԱՅՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԻՒՆ

==

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՄԻՋՈՑՆԵՐ

Քաղուած կաճոնագրէն)

«Հայոց Հայրենասիրական Միութեան» նպատակն է աշխատիլ վարչական բարենորոգութիւններ մտցնելու Թիւրքահայաստանի մէջ, հայ ժողովրդի տեղական պէտքերին համեմատ։ Հայ ժողովրդի ցանկութիւնն է իրաւունք ստանալ ազատօրէն ինքզինք կառավարելու որով միայն պիտի կրնան վերնալ այն հարստահարութիւնները որոնք այսօր Հայաստանի թշուառութեան և աւերակ դառնալուն պատճառ կը լինին։

«Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը իր նպատակ իրագործելու համար իր կարողութեան չափով կը գործադրէ ամեն յարմար եղած միջոցներն, ժամանակի պահանջներին համեմատ. կաշխատի ներքին պէտ գոյացնել Ազգին մէջ իր ազատութեան համար, հրատարակութիւններ կանէ, դիմումներ կանէ որոց որ պէտք է և նիւթապէս ու բարոյապէս կը քաջալերէ անոնց որոնք անձնուիրութեամբ կաշխատին հայրենիքի ազատութեան գործին։

Միութիւնը կունենայ իրեն բերան եղող լրագիր որ, բայց զանազան լուրեր տալէ իրրեւ լրագիր, կը հաղորդէ ընդհանրութեան ինչ որ Միութիւնը ուզէ հաղորդել, տեղեկութիւններ կուտայ Հայաստանի և տարաբնակ Հայերի դրութեան վրայ և կը ծառայէ հայրենասիրական եռանդը արծարծելու Հայերին մէջ։ (*)

Տանօր. «Հայոց Հայրենասիրական Միութեան» անդամակիցի կամ թղթակցի ուղղները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին.

M. Portoukalian
(FRANCE) Marseille

(*) «Հայոց Հայրենասիրական Միութիւն»ը կը նպաստէ Արմենիա լրագրի հրատարակմանը։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Թիւրքերը գործում են.—Հարստահարութեան մր նոր տեսակ.— Առեւտրական դիւրութիւն երզնկայի մէջ.— Վաճառ լուրեր.— Հայեր ի Թիւրքիա.—Ռոմանիայի եւ Պուլկարիայի Հայերի Հոգեւոր Հովուութիւնը.—Նամակ Ռոմանիայեն (Նաշ).—Վարժապետ կաւգուի.—Պարսկաստանեն լուրեր.— Թիւրքիայեն լուրեր.— Կ. Պոլսի լրագիրները.—Գործադուլները Ամերիկայի մէջ.—Աստրապատի խռովութիւնը.—Բօլ.րա.— Տանուցումներ։

ԹԻՒՐՔԵՐԸ ԴՈՐԾՈՒՄ ԵՆ

Բրգական բանակը կազմուում է. վանի մէջ ալ մայիսի վերջում կատարեցաւ դրօշաբացութեան հանդէսը՝ Մուշիր Զեկի փաշայի նախագահութեամբ, որ «Համիտիէ» հեծելագնդի կազմակերպութեան պաշտօնով շրջում էր Հայաստան։ Երիտասարդ միւշիրը այդ հանդիսում յայտնել է ռուսական և անգլիական հիւպատոսներին, թէ Քիւրդերին կրթելու և նրանց ապագա տակութեանց վերջ տալու համար, մեր կառավարութիւնը օգտակար և պատշաճ դատեց նրանց զինուորական խստութեամբ հրահանգել. Սուլթանից էլ յատուկ հրաման կայ նրանց որ այլ եւս ոչ մի քրիստոնէի մազին չի դպչե՞ն . . .։

Պարզ բան է որ Թիւրքիան այս կեղծուպատիր յայտարարութեամբ մի սպիտակ փոշի է ցանում դիւանագիտութեան աչքին. նրա նպատակը ակներեւ է արեւի պէս, — Այս անգամ պաշտօնապէս զինելով այդ ծայրբարբարոսներին խրախուսել որ ամեն ջանք ի գործ դնեն քրիստոնեայ տարրը սպառելու և պատրաստ ախոյեան կանգնեն ռուէ ապստամբական շարժման դէմ։ Այսպէս նրանց շահերը կատարելապէս համաձայնեցնելով իր չահերին, կամաց կամաց թերքաշնել նրանց։ — Իսկ թէ ընդունակ են Քիւրդերը իրանց նոր կոչման, թող դատէ ընթերցողը այս իրողութիւնից, — նրանցից չատերը իրանց ազատ կենցաղավարութեան անպատեարը համարելով զինուորական ընտոր ծառայութիւնը, թէեւ, ըստ մեծի մասին, տատնապետի, հարիւրապետի, հազարապետի կայլն պաշտօնները ստացած են առանց մատնաւոր կրթութեան՝ մի միայն վայփայուելու դիտաւորութեամբ, թողլով տաճկան հողը, անցել են Պարսկաստան։ Մեծամասնութիւնը, որ դրօշակի տակ մնալու փոյթ ու եռանդ է ցոյց տալիս, իսկապէս դժկամակ է առ այդ. պահպարակվում են այն էլ-ազասնները՝ որ վտանգ Սուլթանի համազգեստն ներով զարդարած սեղանից ու ակնախտիղ նուէրներից և իրանք իրանց մի ծանր լուծի տակ դրին. ըստ որում իրանց դրամով պիտի հայթայթեն իրանց համազգեստն ու ձիերը, միմիայն զէնքն ու կրթութիւնը կառավարութեան վրայ են։ Իսկ ինչ որ վտանգաւոր է նրանց տիրութիւնը ծառայութեան տակ մնալու համար, և անզուսպ համարձակութիւն է տալիս, այդ այն չնորհն է, որով նրանք իրանց անձնուէր զինուորներ կոչելով իրաւունք են ստացել պաշտօնապէս սիրել Հայի անձին ու ստացուածքին։ Հէնց զինուորագրութեան սկիզբին, երբ նրանք թեւ առած՝ խրոխտում էին Հայերի դէմ, և ձեռներից եկած նեղութիւն չէին խնայում նրանց տալու. այժմ երբ իրաքանչիւր էլը իր կարմիր դրօշն ստացաւ, էլ նրանց հնպարտութեան ու չարագործութեանց չափ ու սահման չկայ. քաղաքիս շուկայումն իսկ տիրապետութիւն էին բանեցնում, «Թագաւորի զինուոր ենք, փորերովս արիւն կը տանք նրբան» բացագանչելով։ Զեկի փաշան չեկած, ամեն կողմից էլ-ազասինները իրանց հետեւորդներով քաղաքս էին գալիս, համազգեստ պատրաստելու դրօշաբացութեան հանդէսը տօնելու համար. իրանց ճանապարհի վրայ ինկած գիւղերը կողոպտում էին, ծեծում գիւղացիներին ու ոմանց մահացնում. Նոր-գիւղից մօտ քսան հոգի սերտ արին, քաղաքս եկան Նահանգապետին բողոքելու. «Կամ մեր վիճակն ապահովացո՛ւր գիւղի մէջ, ասին, կամ քաղաքում մեզ տեղ տո՛ւր հանգիստ ապրելու», նա, այդ ֆանատիկոս մահմետականը, մի այսպիսի վերահասեցուցիչ պատասխանով ետ ուղարկեց նրանց. «Կորէ՛ք, գեավուրնե՛ր, ձեր հաւատը . . .»։ Այս տեսակ կոպտութեամբ վարուիլ իրան դիմող քրիստոնեաների հետ՝ Նորին Վսեմութեան սովորութիւնն է։

Այժմ լրացած Քրդերը սոսկալի չարիքներ են գործում. ճանապարհները խիստ անապահով դարձած են. Պօլսից եկող երեք կարաւանները կողոպտուած են և դարձողներից չատեր վերաւորուած են, մինչև իսկ քաղաքիս մերձակայ գիւղերի ոչխարն ու գառարն յափշտակվում են ամեն օր. Արճէշի կողմերում մի գիւղի ամբողջ գառարներն աւարելով հանգերձ՝ առեւանգել են չատ աղջիկներ. յաճախ են սպանութիւնները. Բաշկալէի մօտերը, Լէհսան գիւղի նախիրը տանելիս, մի թշուառ Հայ որ երկու «մարալ» եղներից ի զատ ուրիշ բան չուներ, դիմելով հրոսապետին, ազաչում է նրան, որ իր երկու եղնեերը, իր ապրուստի միակ ապրիւրը, չնորհէ իրան. ճիւաղը իր սարճանակի գնատակին է ղոհում նրան։ Մի քանի գիւղացիներ, որ ստիպուած էին իրանց ձիերը ապառիկ վաճառել քիւրդ նորընծաներ զինուորականաց երբ իրանց պահանջն ուզելու են գնում, ազանները, կատակի համար, տալիս են նրանց իւրաքանչիւրին ¼ մէջիա. ի հարկէ պարտաւորք կը պահանջեն իրանց ամբողջ իրաւունքը, Քիւրդերը դժուխային լուսանքներ տեղալով նրանց կրծքի ու պատուի դէմ, մի լաւ ծեծում են նրանց ու ճանապարհ գնում։ Շատախցի Հայերը, որոնց թիւը ղգալի կերպով նուազում է տարեց տարի, կրկին տուրք են տալիս, մինն կառավարութեանը, մինն էլ տիրապետող ազաներին, որոնք ամենայն համարձակութեամբ պարբերաբար բռնի սանձում են տուրք և տասանորդ երկրագործական արդիւնքներից։ Իսկ տեղական կառավարութիւնը մի սառն անտարբերութիւն պահելով երբեմն երբեմն կառակերդական ձեւակերպութիւններով զբաղմանում է։ Ահա մի օրինակ. մի Քիւրդ խլում է մի Հայի եզը. Հայը տեղւոյն պօլիցիականին բողոք բառնալով՝ ետ է ստանում իր եզը։ Զրկեալ Քիւրդը կայմակամի արդարադատութեան է դիմում, յայտնելով թէ Հայից ետ տարած եզը շատ վախտ ու ծեր էր քան թէ այն իր սեպհական եզը, որ տրուեցաւ նրան։ Նորին Մեծութիւնը պատժում է անիրաւին և եզը վերադարձնում է հին տիրոջը. իսկ Հայինը կերթայ «քէս»։ . . .

Քրդերը առաջ գոնէ մի գովելի յատկութիւն ունէին, աւանդական պարտաճանաչութիւն. սակայն այս վերջին տարիներ, այդ առաւելութիւնն էլ կորցրին ու Հայի իրաւունքն ուրանալը մի սրբազան պարտք են համարում։

10/22 յունիս 1892 Պ.
Վան

ՀԱՐՍՏԱՀԱՐՈՒԹԵԱՆ ՄԻ ՆՈՐ ՏԵՍԱԿ

Թիւրք կառավարութիւնը արդելք դրեր է որ Ծիւ Ծովի ասիական նաւահանգիստներէն ճամբորդել ուզող Հայերը յունական, ֆրանսական և կամ ուրիշ ազգերի շոգենաւերը չնստին, այլ միայն Թրքական «Մահսուսէ»ի շոգենաւներով ճամբորդեն։ Այդ Թրքական նաւերը ոչ թէ միայն կրկնապատիկ ժամանակ կը կորնչցնեն մէկտեղ միւս տեղ ճամբորդ փոխադրելու համար այլ նաեւ շատ անմաքուր և տարափոխիկ հիւանդութիւններու բոյն են, ըստ որում իրենք առհասարակ մահմետական գաղթականներ կը փոխադրեն և քրիստոնեայ շատ քիչ ճամբորդ ադոնց վրայ ճամբորդել կը վստահի։ Բայց այդ արդելքի մէջ ամենէն մեծ անիրաւութիւնն այս է որ մինչդեռ յունական, ֆրանսական և ռուսական շոգենաւային ընկերութիւնները իրար հետ մրցումի մէջ լինելով Տրապիզոնէն մինչև Պօլիս 20, 10 և մինչեւ իսկ 5 ղրուշով նաւի տոմսակ կուտան, Թրքական ընկերութիւնը բոլոր իր տոմսակները 150 ղրուշի կուտայ Հայաստանցիներին, կառավարութեան այդ արդելքէն նպաստաւորուելով։ Այս վերջերս Տըբապիզոն հասնող մի քանի ճամբորդներ ալ որոնք օտար շոգենաւի աժան տոմսակներ արդէն առած էին, ստիպուեցան եւ տալ և Թրքական նաւով ճամբորդել. սակայն նաւին մէջ լեցուած կեղտոտ գաղթականներին հետ չկրնալով նաւի կամուրջին կամ ամբարին մէջ կենալ, ստիպուած էին 20ական ղրուշ ալ առանձինն վճարել որպէս զի նաւին մէջ գաղթականներէ հեռու մի անկիւն տեղաւորուին։

Այժմ Թիւրք կառավարութիւնը իր ոստիկաններին թոշակ տալու պէտքը չունի այլ եւս. Ամերիկա գաղթելուն արդելքը պատրուակ բռնելով իրենց ձեռքը, անցագրատան վերի պաշտօնեայներէն մինչեւ մաքսապահ յետին Թիւրքը ամեն մի ճամբորդ իրենց կրցածին չափ կը կողոպտեն։ Սովորաբէս Պօլիս պանդխտող Մշեցի, Վանեցի ճամբորդներն ալ որոնք Ամերիկա երթալու դիտաւորութիւն չեն ունեցած, ադոնք ալ նոյն պատրուակով ոստիկաններէ կը բռնուին. կը բանտարկուին, մինչեւ որ իրենց ունեցած դրամը ասոնց յանձնելով իրենց օձիք ազատեն։

ԱՌԵՒԱՆԳՈՒԹԻՒՆ ԵՐԶՆԿԱՅ ՄԷՋ

Մեզ կը հաղորդեն հետեւեալը.

«Երզնկայէն 1½ ժամ հեռի Բադռիճ գիւղէն մի հայ աղջիկ բռնաբարուելը է այս մայիս ամսի 31ին, հետեւեալ պարագայի մէջ։ Աղջկան ծնողք և գիւղի միւս երիկ մարդիկ դաշտ գնացած կը լինին աշխատելու. կէսօրին, երբ գիւղը դրեթէ անմարդի մնացած է, Պէյղատէ կոչուած մի Թիւրք ուրիշ 4 սրիկայ Թիւրքերի հետ աղջկան տունը կը մտնէ և զայն ընկերներուն հետ լուռ կը փախցունէ։ Գիւղացիները բողոք կուտան տեղական կառավարութեան և հեռագրով ալ Կ. Պոլիս կը հաղորդեն իրենց դանգատը։ Ոստիկանութիւնը միշտ այսօր վաղի ձգելով գործը, չարագործները չձերբակալեր, միայն երբ զինկայի առաջնորդարանի ստիպման վրայ, դատարանը կըստիպուի աղջիկը բերել տալ իր ներկայութեան և քննել թէ կամովի՞ն փախած է։ Թիւրքերը նախապէս աղջկան խոստումներ և սպառնալիքներ ընելէետք կը հանեն դատարանը ուր կը դանուին նաև Հայոց Առաջնորդը և մի քանի Հայեր։ Աղջիկը ինքզինք կրծնաւորի առջեւ տեսնելով ա՛լ ամեն սպառնալիք և խոստում մոքէն հանելով, համարձակ կը բողոքէ իր վրայ եղած բռնաբարութեան դէմ և կը պնդէ իր հայութեան և կրօնի վրայ։ Այդ յայտնութենէ ետք, Թիւրքերը կըստիպուին աղջիկը յանձնել Հայոց առաջնորդարանին որ այժմ Երզնկա քաղաքին մէջ մի Հայու տունն կը պահպի, չհամարձակելով դիւղը երթալ, Թիւրքերի վրէժխնդրութեան պատճառով։ Իսկ բռնաբարողները բոլորովին անպատիժ և ազատ կը պտըտին։»

ՎԱՆԷՆ ԼՈՒՐԵՐ

Վանէն յուլիս 18/30 թուով կը հաղորդեն մեզ հետեւեալները.

«Տեղական կառավարութիւնը Նախանեան կարապետին գլխաւոր հեղինակ համարելով վանի մէջ այս վերջին 2–3 տարիներն պատահած դէպքերին, 15 տարուան չղթայակապ բանտարկութեան դատապարտել տըւաւ. իսկ Գարեգին Բաղէշցեանին, Զարեհեանին, փ. Թէրլէմէզեանին և Պաղտասարեանին 10ական տարուան վճիռ տրուած է ի բացակայութեան. Նախկին փոլիս Աւետիս Պարթեւեանն ալ 15 տարուան պիտի դատապարտուէր եթէ վերջին պահուն իսլամութիւն ընդունելով չազատուէր պատժէն։ Իր մնաին եղած քմահաճ և անիրաւ վրճռին դէմ կարապետ Նախանեան, ինչպէս գրուած է արդէն, բողոքեր է կեդրոնական կառավարութեան։ Դատապարտուածները ի զուր զոհ եղած են իրենց անձնական թշնամի եղող մի քանի հայ ազանների ղըպարտութիւններին։ Սղզայեցիներէն լինն հոգին տակաւին բանտարկուած կը մնան, նոյնպէս բանտը կը մնան մանուկ Զըբաղեանի սպանման խնդրով բռնուած երկու անմեղ երիտասարդները, թէեւ հարցաքննութիւններէ երեւան ելած է իրենց անմեղութիւն։

«Անցեալ շաբթու վանի Ազգային Դատաստական Ընդհ. ժողովը ի նիստ գումարուելով հակառակ կառավարութեան կողմէ ի գործ դրուած ճնշման և Ա. յովսեան Ս. Հօր ամեն ջանքերին, կրօնական և քաղաքական ժողովներն ընտրեց դուռ ժողովրդական անձերէ որով և աւելի արժանացաւ ժողովրդի վստահութեան և համակրութեան։»

ՀԱՅԵՐ Ի ԹԻՒՐՔԻԱ

Կ. Պոլսէն օգոստ. 5/17ին կը հաղորդեն մեզ հետեւեալը.

«Սխալ է թէ Գեր. Եղնիկ եպիսկոպոս Ապահունի երուսաղէմ ուղեւորած է։ Տակաւին ոստիկանութեան գանգատը չէ վճռեալ այսօր։ Կըսուի թէ Հռոմէական Հայերիպատրիարք Գեր. Աղարեան կաշխատի եղեր զինք աղատելու։ Գեր. Եղնիկ եպիսկոպոսին յանցանք համարուեր է որ անցած կիրակի օր Գումգափուի դրսի Ս. Գրոլթիւն եկեղեցւոյն մէջ պատարագիչ եղած ժամանակ մի քարոզ խօսեր է, իրեն քնարան դնելով «Քաղաքս փըրկելոյ ի գերութենէ և ի չար ծառայութենէ։»

—Պրուսայի Առաջնորդ Գեր. Բարթուղիմէոս Արքեպիսկոպոս որ կ. Պոլիս կը գտնուի այժմ, քաղցկեղի հիւանդութիւն ունեցած է։ Վիճակը ծանր է. 4 բժիշկներ խորհրդակցութիւն անելէ յետոյ, վաեմ. Տաճիան փաշա Ալանեանի միջոցով վիրաբուժական գործողութիւն կատարուեր է Գեր. հիւանդին վրայ։

— Տիրահռչակ Արիստակէս եպիսկոպոս Դերձակեան Պաղտատ կը ղըրկուի պատրիարքական փոխանորդի պաշտօնով։

Պուլկարիահ և Ռումանիահ Հայերի Հոգեւոր Հովուութիւնը

Արեւելքի մէջ կը կարդանք հետեւեալը.

«Գեր. Մելքիսեդեկ եպիսկոպոս Մուրատեանց չէ ընդունած Պուլկարիոյ և Ռումանիոյ Հայոց այցելու հովուի պաշտօնը, զոր Ազգային Վարչութիւնն առաջարկած էր Ն. Գերազանցութեան։»

ՆԱՄԱԿ ՌՈՄԱՆԻԱՅԷՆ (1)

Եաշ, 21/3 յուլիս 1892

Դեռ չկայ երկու տարի և ահա Եաշի հայ հասարակութիւնը չորրորդ մեծ ցաւալի կորուստ մ'ալ ունեցաւ յանձին Մեծարգոյ Տիար Խաչերես Գարագաշեանի։

1890 տարւոյ սեպտեմբերի ամսոյ ընկիզը կը մեռնի Գրիգոր Գարագաշեան, այժմեան հանգուցեալին եղբայրը և քաղաքիս առաջնակարգ և անուանի վաճառականներէն մէկը։ Տարւոյս սկիզբը կմեռնի Քրիսթով Բրունդուլ, Գարագաշեանի մօրեղբօր որդին, նմանապէս առաջնակարգ վաճառական և վերջինն Հայոց ազգէն, որով Եաշի չուկան բոլորովին պարապ կը մնայ հայ վաճառականներէ և կը զրկուի դեռ երկու քրիստոնեայ վաճառականներէ։ Երրորդ ցաւալի կորուստն ունեցանք տարւոյս ապրիլ ամսոյն մէջ յանձին Ստեփան Ցկ. Զէրգէզեանի, Լիսէի վարժապետ լատիներէն և ռումաներէն լեզուաց։ Կը մխիթարուինք թէ անագորոյն մահը գոհ կը մնայ գոնէ առժամանակ մի այսչափ թանկագին զոհերով. բայց ո՛չ, ինքը կը պատրաստուէր ուրիշ աւելի ցաւալի հարուած մ'ալ տալ մեզ, յափշտակելով մեզմէ նաեւ մեր ամենասիրելի Խաչերես Գարագաշեանը։

(1) Թէեւ այս նամակի թուականը հին է, բայց որովհետեւ աւելի մի տեղեկագրութիւն է Ռումանիոյ Հայերի կրթական դործիչներուն վրայ քան թէ մի նամակ, կրնայ միշտ կարդացուիլ մեծ հետաքրքրութեամբ։ ԹՈՓՉ.

գուցեալն ալ եաչ վերադարձաւ ուսումը շարունակելու. ասկէց ռումէն վարժարան անցաւ ուր շարունակեց և աւարտեց ռումէնական լեզուն, ինչպէս նաեւ գաղիականը և գերմանականը։ 1846էն մինչեւ 1850 թուականը օգնական ուսուցչի պաշտօն վարեց Եաչի Հայոց դըպրատունը. իսկ անկէ ետքը առաջին ուսուցիչ անուանեցաւ հայերէն, ռումաներէն և գաղղիերէն լեզուաց մինչեւ 1866 թուականը։ Անկէ ետքը առանձին նախկրթական դպրոց մը բացաւ իր սեպհական չէնքին մէջ գիշերօթիկ աշակերտներ ալ ընդունելով. և ժիր ու անխոնջ աշխատանքով քիչ ժամանակի մէջ այնչափ համբաւ ստացաւ, որ այլ և այլ քաղաքներէ և ամեն ազգէ եւս ծնողք կուգային վստահութեամբ յանձնել իրենց զաւակները Գարագաշեանի լատ դաստիարակութեանը. իսկ խնդիրները այնպիսի բազմութեամբ կը դիզուէին որ կարող չէր ամենն ալ ընդունիլ և ծնողաց թախանձանաց պատասխանել։ Ցաւն է որ այսպիսի նպաստաւոր պարագայից մէջ հարստութիւնն ալ կը դիզուի առատապէս։ Ուստի բազմաչխատ Գարագաշեանը բաւական հարստութեան տէր ալ եղաւ գիտնական աշխատանքով։

Ցիշատակաց արժանի հանգուցեալը ուրիշ բարեմասնութիւններով ալ զարդարուած էր, որով նորա կարօտեան ցաւը աւելի ուժգին հարուածեց ամենուն սիրտը որ զինքը ճանչնալու առիթն ունեցան։ Էր բարեսիրտ և անկեղծ, լաւ քրիստոնեայ, ազգասէր և պատուաւոր քաղաքացի։ Եւ այս առաքինի անձին ոտքերուն մէկը հիւանդանալով, վիրաբուժին սղոցին յանձնելու դժբաղդութիւնը ունեցաւ որմէ յետոյ անուանելի ցաւերով կնքեց իր մահկանացուն յունիսի 7/19ին գիշերը, միայն 65 տարուան հասակի մէջ։

Ցունիս 10/22ին ժամը 3ին կէսօրէն ետքը որոշուած էր յուղարկաւորութեան հանդէսը կատարուելու. ազգականք, բարեկամք, գտնուած աշակերտներէն շատերը, ինչպէս նաեւ ընտիր բազմութիւն մը ներկայ էին հանդիսին։ Յուղարկաւորութիւնը առաջին կարգի և ամենափառաւոր կերպով կատարուեցաւ։ Դագաղը ապակեղէն և ոսկեզօծ կառքի մը մէջ դնելով կատարուեցաւ, չորս կոմը ազգականներէ և բարեկամներէ նուիրուած մեծամեծ պսակներով զարդարուած ի պատիւ հանգուցելոյն. այս կառքը վեց ձի կը քաշէր. ուրիշ քառաձի կառք մ'ալ աւելի առաջ կերթար, որ նմանապէս շատ պսակներ կը տանէր աշակերտներէ և բարեկամներէ նուիրուած։ Վեց դամբանական ճառ խօսուեցաւ, որոնցմէ նշանակութեան արժանի է Մեծ. Գրիգոր Մ. Պըլըգլեանը որ է հանգուցելոյն առջի աշակերտներէն մէկը։

Դագաղը եկեղեցի իջեցուցին և թաղման կարգը կատարելէն ետքը, եկեղեցւոյ դրան առջեւ հանելով, վայելուչ ամպհովանիի մը տակ զետեղեցին։ Յետ Մեծարգոյ Տիար Գր. Մ. Պըլըգլեան, Ռումանիոյ Ծերակուտին անդամ և անուանի իրաւագէտ, դամբանական ճառ մը խօսեցաւ հետեւեալ բնաբանն նկարագրելէն առնելով. «Գրեցայ ի գիր կենդանութեան և մեկնեցայ երթալ առ Արարիչն երկնի և երկրի»։ Այս բնաբանը ռումաներէնի թարգմանելով յարմար մեկնութիւն տալէն ետքը, այնպիսի սրատեսութեամբ մը նկարագրեց հանգուցելոյն կատարելութիւնները, որ ներկայ եղողները հառաչմամբ կափսոսային անոր կորուստը. և նորա քառասուն և հինգամեայ վարժապետական կենաց պատմութիւնն ընելով, մէջ բերաւ նաեւ Մոլտաւիոյ — այսօրուան Ռումանիոյ վերին նահանգ — Հայոց ազգային կարգադրութեանց պատմութիւնը, նոյնպէս և գպրոցաց բարեկարգութեանց ամենակարեւոր դէպքերը և նորա չնորհուած

արտօնութիւնները ևայլն : Սակայն հաժեստութիւնը որ բնական է Տիար Պըլճեանի, չներեց բացատրութիւն ալ ընել այն առենի ազգասէր անձանց վըրայօք, որոնք ո՛չ աչխատանք և ո՛չ զոհողութիւն խնայեցին ազգային յառաջդիմութեան, վասն զի անոնց ամենէն լուսաւորեալը և ամեն բարեկարգութեանց ձեռնարկողն էր իւր բարեյիշատակ հայրը, լուսահոգի Յակովբ Մանչուկ Պըլճեան : Դամբանականը լմնցնելէն ետքը դագաղը նորէն կառքը զետեղեցին և հանդարտագնաց քալուածքով ճամբայ առին դէպի գերեզմանատուն :

Արդ՝ սորագրեալս իբր աչակերտ եղի Հայոց դպրոցին և ժամանակակից ու պաշտօնակից հանգուցեալ Թ. Գարագաշեանի, պարտք կը համարիմ ինձ, գոնէ համառօտաբար, ի գիր անցունել և հրատարակաւ ծանուցանել, այս առթով, այն բարերար և ազգասէր անձանց անուանները, որոնք արդէն պատմութեան կարգը անցած են չատոնց և որոնք յիշատակութեան արժանի գործեր թողուցած են իրենց յաջորդներուն :

Հին առեններ Նաչի Հայոց դպրոցը, ինչպէս նաեւ ուրիշ դպրոցներ ալ, եկեղեցւոյ տիրացուն որ գիտնական մարդ համարուած էր, մանկավարժութիւն ալ կընէր դպրատան մէջ : Նարեկ կարդացող աչակերտը արդէն ուսումն աւարտած կը սեպուէր, մաքուր գրելը առաջին տեղ կը բռնէր, հաշիւն ու թուաբանութիւնը գրեթէ անօգուտ բան համարուած էր. սիրացուները մի միայն եկեղեցին սպասաւորութիւն ընելու դպիրներ կը պատրաստէին : Ժամանակին երեւելի ազգայինք տեսնելով թէ այսպիսի ընթացքով դպրոց մը յառաջադիմութիւն չկրնար ընել և արդիւնք բերել, մտածեցին ուսեալ անձ մը գտնել ու դպրոցը բարեկարգել. փնտռեցին և գտան Կիրակոս անունով Պօլսեցի վարժապետ մը, որ եկաւ քերականութիւն և Հայոց պատմութիւն ալ մայուց դպրատան մէջ. բայց սորա մանկավարժութեան եղանակը գիտէք թէ ո՞րն էր.—տաճկական ցալախան էր, տեսակ մը կախաղան որ տղուն ոտքերը մէջը սեղմելով, ուրիշ աւելի մեծ աչակերտներէն երկու հոգի 6-7 տարեկան դժբաղդ տղան ոտքերէն կախեալ ուսերնուն վրայ կվերցնէին, որպէս զի պատուելի վարժապետը բարձր սեղանի մը վրայ բարձերով չրջապատեալ ալաթուրքա նստած տեղէն երկայն եղդնեղով կրցածին չափ զարնէ խեղճ տղուն ներքաններուն: «Մեղա՛, վարժապետ ալա չի մի անիս», կը պոռայ գլխիվայր կախեալ դժբաղդը. բայց ո՞վ լսէ, վարժապետին ձեռքը դեռ չհոգնեցաւ, պէտք է որ զարնէ մինչեւ հոգնի և ողորմելի տղուն ոտքերը պէտք է ուռին և 3-4 ամիս ալ անկողինը պառկի, որպէս զի իբրատաւի և բանակոթները(*) չկորնցուն:

Մէջ բերի այս փոքրիկ պատմութիւնը գիտցուելու համար նաեւ դաստիարակութեան ոճն ալ որ կը տիրէր այն առենները դպրոցներու մէջ և ո՞վ գիտէ թէ ո՛րչափ զոհեր կը տանէր :

(Շարունակելի)

ԼՈՒԹՖԻ

ՎԱՐԺԱՊԵՏ ԿՈՒԶՈՒԻ

ՌՈՒՄԱՆԻԱԻ ՌՈՄԱՆ քաղաքի հայ վարժարանին համար հայերէն լեզուի վարժապետի մը և վարժուհու մը պէտք կայ : Իւրաքանչիւրին կը տրուի 100ական ֆրանկ ամսաթոշակ,

(*) Բանակոթ, քառակուսի մանր մահճակալներ էին, որոնց վրայ ա ր գ տաւէրը կը նշանակուէին ու նարեկ աչակերտաց ձեռքը կը տրուէին, գրելը ճանչցուելու համար :

բնակութեան տուն և ձմեռը վառելիք տայ : Լաւագոյն է եթէ վարժապետն ու վարժուհին այր և կին լինին . բայց կարելի է նաեւ որ զատ զատ անձեր լինին : Քիչեալ պաշտօնը յանձն առնել փափաքողները պէտք է դիմեն հետեւեալ հասցէին .

Monsieur N. Th. Solomon
(Roumanie) ROMAN

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԷՆ ԼՈՒԻՐԵՐ

Հետեւեալները կը հաղորդեն մեզ յուլիս 12/24 թուով .

Պարսկական սահմանագլխում (Սալմաստ) Քրդերը անվախ կերպով սպատակութիւններ են անում. սահմանագլխի երկու կողմի բոլոր գիւղերի բնակիչները միշտ վախ ու սարսափի մէջ են : Պարսկաստանից Շիքակ Քրդերն են գնում Աղբակայ հայաբնակ գիւղերն կողոպտում. իսկ Աղբակից էլ օսմանեան Քրդերն են գալիս և Սալմաստի հայ լեռնաբնակ գիւղերն են կողոպտում: Սալմաստի սահմանագլխում հայաբնակ մի քանի գիւղերը չկողոպտուելու համար սուիսլած են միշտ ամեն օր Շիքակ Քրդերին պարգեւներ տալ : Քրդերը այսպիսի համաձայնութիւն գտան այն օրից երբ Պահրի փաշան ոտք դրեց վան : Աղբակում չկայ մի հայաբնակ գիւղ որ վնասուած չլինի Քրդերից :

— Բաշկալայի պարսկական փոխհիւպատոսը իր պաշտօնավայր գնալիս, մի խումբ քիւրդ աւազակներից կողոպտւում է Խանասորից այն կողմ Ալտարա ձորում. բայց ի պատիւ Շահի կառավարութեան մի ձի թողնում են իրեն որ ոտքով չգնայ իր պաշտօնատեղ Բաշկալա :

— Խոյից կոթուր գնացող ճանապարհում Քրդերը աղատ կերպով աւազակութիւններ են անում:

— Որմիոյ կողմը, Մերկավար գաւառում, Հարքի քիւրդ ցեղը բոլորովին ոտքի կանգնած , մինչեւ 600 մարդով , բոլորն էլ մարթինի հէնրի հրացաններով զինուած կռւում են Համօ անունով մի քիւրդ ցեղապետի 200 մարդկանց հետ . կռիւը մի Քրդի ըսպանուելուն վրայ է ծագում: Երկու անգամ կռւում են իրար հետ և երկու կողմից էլ 90 մարդ է սպանվում, վիրաւորեալների թիւը յայտնի չէ : Կռուի ժամանակ քիւրդ Հարքի ցեղի քիւրդ կանայք տիկերով ջուր և տոպրակներով փամփուշտ էին հասցնում իրենց եղբայրներին : Վերջը Համօ չարաչար կերպով յաղթւում է և դիմում Շահի կառավարութեան : Որմիից մի դունդ զօրք գնալով թէ՛ Համօին են ազատում պաշարումից և թէ՛ խաղաղութիւն են գցում մէջերնին : Մինչեւ սրանց հաշտուելը Քրդերը մեծամեծ ջնաններ հասցրին Որմիոյ շրջակայ գիւղերին :

— Խոյի շրջակայ գիւղերում ամեն գիշեր աւազակութիւններ են լինում: Խոյին մի քանի ժամ հեռացած Ռուսաստանից եկող մի խումբ պանդուխտ Հայերին կողոպտում են աւազակ Քրդերը :

Ատրպատականի ամեն կողմից լսւում է մեծ խռովութ կայ . դրա համար էլ կառավարութիւնը կասպից ծովից դէպի Ատրպատկ եղած յարաբերութիւնները փակեց և միայն փոստի երթեւեկութեան արտօնութիւն է տրուած . նա էլ Պարսից հողը մտնելուն կարանթինի է ենթարկվում: Դավրէժ քաղաքի բնակչաց կէսից աւելին քաղաքից դուրս են եկել խոլերայից վախենալով և բնակվում են գիւղերում: Դավրէժցիների այսպէս սարսափահար լինելուց օգտուեցան ձիապանք և աղքատ հասարակութիւնը . ձիապանք մէկ օրվայ համար իւրաքանչիւր ձիու 10 ղուան (7 ֆրանք) վարձք են առնում. իսկ աղքատներն էլ փախչողների տունները պահպանելու համար օրական 2 ղուան և բոլոր ուտելիք վարձք են առնում: Խոլերայի պատճառաւ երբ սկսեց Ռուսաստանից երթեւեկութիւնները դադրել, Ատրպատականում չաքարը գդալի կերպիւ բարձրացաւ . հիմա լիտրը 6 ղուան է : Թագաժառանգը և միւս բարձրաստիճան պաշտօնեայներն էլ քաղաքը թողլով լեռնային ամարանոցներ (Սոհունդ լեռը) գացած են :

Սալմաստում մանուկների մէջ մի տեսակ համաճարակ տենդ է տարածվել . սակայն ցարդ մահ չէ պատահած:

ԹԻՒՐՔԻԱՅԷՆ ԼՈՒԻՐԵՐ

Կ. Պոլսէն օգոստ. 16 թուով կը գրեն Սեւնափօրին հետեւեալները .

«Պր. Սթամպուլօֆ Կ. Պոլիս եկած առեն Մեծ-Վէզիրին արած այցելութեան առթով խօսք բացեր է Իշիան Ֆէրմինանի ճանաչման մասին և խնդրեր է որ Թիւրքիան պաշտօնապէս օրինաւոր ճանչէ Պուլկարիայի վարչական ներկայ վիճակը . Ձեվատ փաշան ալ պատասխաներ է որ Բ. Դրան հաւանութիւնը կախում ունի վեց մեծ տէրութիւնների հաւանութենէն : Պուլկարիայի նախարարապետը անկէ ետք առաջարկեր է Պուլկարիան երկաթուղային ուղղակի դծով միացնել Մակեդոնիայի հետ . այդ մասին ալ Թիւրք փաշան , ինչպէս որ սովորութիւն է բոլոր Թիւրք պաշտօնեայներին՝ ո՛չ հաճութեան և ո՛չ մերժման պատասխան մը տուեր է , այլ անորոշ կերպով ըսեր է միայն որ յանձնաժողով մը պիտի կարգէ այդ շինուելիք դծին տեղերը քննելու և անոր տուած տեղեկագրէն ետք հարկ եղածը պիտի որոշէ : Պր. Սթամպուլօֆ չատ պատուով ընդունուած է Սուլթանին քով , Մեծ-Վէզիրը իրեն ի պատիւ մեծ հացկերոյթ տուած է և իր մեկնելուն օրն ալ Թիւրք կառավարութեան ծախքով Արեւելեան երկաթուղւոց ընկերութիւնը յատուկ մի կառախումբ դրած է անոր տրամադրութեան տակ , Սոֆիա վերադառնալու համար : Իր կեանքի պահպանութեան համար ալ բազմաթիւ ծպտեալ ոստիկաններ ուղեկից տրուած են իրեն :

«— Լիբանանու նորընտիր նահանգապետին Մեծ տէրութիւններէ վերացման առթով , դեսպանները մի յիշատակագիր ուղղած են Դրան որպէս զի Լիբանանի կազմական կանոնադրին դէմ նախորդ երկու նահանգապետների գործած ղեղծումները այլեւս չկրկնուին . այդ ղեղծումներէն մէկն էր որ նահանգապետները՝ առանց կանոնագրին համեմատ քննութեան ենթարկելու , իրենց չուզած դատաւորները պաշտօնանկ կանէին , նոյնպէս և Լիբանանի մէջ բնակող այլ և այլ ազգութիւնների չահերին հակող յատուկ մի մարմնի պաշտօնը չնչացած էին :

«— Քոլէրայի պատճառած երկիւղին պատճառով Կ. Պոլսի մէջ դարձեալ սկսեր են մտածել Գասըմ փաչայի ձորը գոցելու վրայ , ուր կը վազեն քաղաքի մի մեծ մասի ադտեղութիւնները . սակայն 1½էն 2 միլիոն ֆրանքի չափ մի գումար պէտք է ծախքին համար : Այդ դրամ քաղաքապետութեան մնտուկին մէջ չգտնուելով , Թիւրք կառավարութիւնը միջազգային Առողջապահական ժողովին դիմած է 60,000 ոսկու մի փոխառութիւն անելու համար . սակայն այդ ժողովի մնտուկին մէջ գտնուած դրամը դրեթէ միջազգային ստացուած մը լինելով , պէտք եղած էր տէրութիւններէ դեսպաններին հաճութիւնը առնել : Այժմ դեսպանները տուած են իրենց հաճութիւն հետեւեալ պայմաններով. Ա. Լինելիք շինութիւնները առաջուց Առողջապահական ժողովէն տեսուցուին . Բ. Շինութեան համար գործածուելիք գումարների հաշիւները Հանրային պարտքի վարչութեան կողմէն ստուգուին և Գ. Եւրոպացի ճարտարագէտները պիտի վարեն շէնքին աչխատութիւնները : Այս պայմաններով ստակ փոխ պիտի տրուի և այդ ձոր գոցուելով մայրաքաղաքի մաքրութեան գործը մի մեծ քայլ առած կը լինի :»

Կ. ՊՕԼՍԻ ԼՐԱԳԻՐՆԵՐԸ

Լրագիրներուն դրոշմատուրքին առթով Կ. Պոլսի Սպասի լրագրի հրատարակած մի յօդուածէն կհմացուի որ Կ. Պոլսի մէջ կը ծախուին օրական 13,000 օրինակ Թուրքերէն , 8000 հայերէն , 7000 յունարէն և 3000 ֆրանսերէն լրագիրներ . պուլկարերէն և հրէայերէն շաբաթական Թերթերն ալ 800 օրինակ :

ԳՈՐԾԱՒՈՐՆԵՐԸ ԱՄԵՐԻԿԱԻ ՄԷՋ

Ցայտնի է որ Թէ՛ Եւրոպայի և Թէ՛ Ամերիկայի մէջ գործաւոր դասակարգը սկսեր է իր մէջ միութիւններ կազմակերպել , գործաւորական սըրտուիներ հիմնել , որոնց մէջ գործաւորի վճարած չաբաթական մի քանի սէնթի , ամսական մի քանի ֆրանքի կամաւոր տուրքերը միլիոններու հասնող դրամական մեծ ոյժեր կազմած են որոնցմով գործաւորները կը կըռուին դրամատէր գործարանապետներու դէմ , գործադուլներ կանեն խմբուվին , այդ դադարի ժամանակ գործաւորական կեդրոնական մնտուկէն Թաշակ կը վճարուի բանթող տրած անդամներուն , ապով լրագիրները կըհիմնեն գործաւորներու դատը պաշտպանելու համար նպաստ նպաստ : Անգլիա , Ամերիկա , Ֆրանսա մէջ այդ կազմակերպութիւններ հետզհետէ կը չատնան . բայց տակաւին չեն կրնար

Հնուասարիկ Ամերիկաի Միացեալ Նահանգների մէջ հաստատուած գործաւորական միութիւնների ունեցած զօրութեան. ադմնց վրայ մի գաղափար տալու համար, յիշենք միայն որ այդ գործաւորական միութիւններէ մէկին՝ «Աշխատութեան ասպետների» վարչութեան նախագահը տարեկան 60 հազար ֆրանքի թոշակ ունի. և գործաւորների սանթիմներէն գոյացած այդ գործաւորական մնուկը. միւս պաշտօնեաներին ալ 10–12,000 ֆր.ի թոշակներ կուտայ: Այդպիսի ուրիշ շատ միութիւններ ալ կան այդ երկրի մէջ:

ԱՍՏՐԱՊԱՏԻ ԽՈՒՀՈՒԹԻՒՆԸ

Աստրապատ քաղաքին մէջ որ կասպից ծովին եղերքը կը գտնուի, Պարսիկ մոլեռանդ ժողովուրդը գրգռուելով որ իբր թէ Ռուսերը պատճառ եղած են քօլերային այնտեղ մտնելուն, յարձակած են ռուսահպատակ հայ դիւղացիներուն խանութներուն վրայ և քանդած են Աստրապատի կառավարչին բնակարանը: Կառավարիչը հեռացած էր արդէն քաղաքէն: Թընդանօթակիր ռուսական երեք չոգենաւներ հասած են Աստրապատ ուր հետեւակ և ձիաւոր զօրքեր բերած են պաշտպանելու համար ռուսահպատակները:

ՔՕԼԷՐԱՆ

Դաւրէժի մէջ քօլերան սաստկացած լինելուն պատճառով, օսմանեան կշռանութիւնները սահմանապուհներուն վրայ զգուշական խիստ միջոցներ ձեռք առած են որ քօլերան Աստրապատականի կողմէն վան կամ Հէքեարի չմտնէ: Նոյն խիստ զգուշութիւններ կը գործադրուին նաեւ ռուսական սահմաններէն դէպի Ցաճկահայաստան մտնել ուզողներուն դէմ:

— Պարսկաստանի Շահը որ իր երկրի մէջ պատերներ կանէր, երբ իմացեր է թէ քօլերան մտած է իր մայրաքաղաք, ուղեր է Թէհրան վերադառնալ. բայց կեդրոնական կշռանութիւնները խորհուրդ տուեր են իրեն թէ խոհեմութիւն է այժմ երթալ Էլպրուզ լեռին վրայ բնակիլ: Բացի պատերազմի և ներքին գործերի նախարարներէն, միւս բոլոր նախարարները և կարող անձեր Թէհրանը թողած հեռացած են:

— Պարսկաստանէն եկած հեռագիրները կ'ըսեն որ Սօուղպուլաղէն 16 ժամ հեռուն եղող Մարագա մէջ քօլերան սկսած է կոտորածներ անել: Իսկ Սօուղպուլաղ թէեւ քօլերա չկայ, բայց կը վախցուի որ հոն ալ մտնէ որովհետեւ զգուշական միջոցներ ձեռք առնուած չեն:

— Կովկասի «Հայոց Բարեգործական Ընկերութիւն»ը Ընդհ. ժողով գումարելով, իր պահեստի դրամէն 5000 րուբլու արտակարգ մի ծախք յատկացուցեր է քօլերային դէմ զգուշական միջոցներ ձեռք առնելու համար Կովկասի մի քանի քաղաքներու մէջ:

ՊԱՐԳԵՒ

«ԱՐՄԷՆԻԱ»Ի ԲԱԺԱՆՈՐԴՆԵՐԻՆ

Արեւելեան առաջիկայ 8րդ տարեշրջանի սկզբէն մինչեւ վերջ (1892 օգոստոս — 1893 յուլիս) կանոնաւորապէս բաժնորդ լինելով՝ իր բաժնորդագրին կանխիկ վճարողներուն համար վճակ պիտի ձգուի և 4 պարգեւ պիտի բաշխուի իրենց: Անոնք որ վեց ամսէ վեց ամիս կամ երեք ամսէ երեք ամիս ԿԱՆԽԻԿ ՎՃԱՐԵԼՈՎ 8րդ տարեշրջանի բաժնորդագիրը վճարած կը լինին ամբողջապէս, նոյնպէս իրաւունք կունենան այդ պարգեւի վիճակախաղին մասնակցելու, իբրեւ ամբողջ տարեկանը կանխիկ վճարածներ: Այդպէս մաս առ մաս ամբողջ տարեկանը վճարողները իրենց վերջին վճռական (1893 փետրուար — 93 յուլիս) կամ վերջին եռամսեայի (1893 մայիս—յուլիս) վճարքին առթիւ վրայ տպագրուած թուով կը մասնակցին վիճակախաղին: Անոնք որ 8րդ տարեշրջանի տարեկան բաժնորդագրին ամբողջապէս վճարած չեն դեռ վիճակախաղը կատարուելիք ժամանակ, բնականապէս կը զրկուին պարգեւին մասնակցելու ոեւէ իրաւունքէ որովհետեւ իւրաքանչիւր բաժնորդ պէտք է դիտէ թէ իւր ամբողջ տարեկան կամ տարեկանը լրացնող բաժնորդագրութեան առթիւ տրուած թիւը այն 4 թիւերէ մի՞ն է որոնք վերոյիշեալ պարգեւներէ մին չահած կը լինին:

Զորս պարգեւ պիտի բաշխուի ամբողջ բաժնորդներէն 4ին որոնց որ թիւը ելնէ վիճակախաղին ելած առեն: Առաջին անդամ քաշուած առեն, որ բաժնորդի որ առաջադրի թիւը ելնէ, նա պիտի առնայ Արեւելեան խմբագիրը–առօրեկնէն 400 ֆրանք. երկրորդ անգամ քաշուած առեն, ելած առաջադրի թուին տէրը պիտի առնայ 300 ֆրանք. երրորդինը՝ 200 ֆրանգ և չորրորդինը 100 ֆրանգ:

ԾԱՆՈՒՑՈՒՄՆԵՐ

Փաքէի չոգենաւները կը մեկնին Մարսէյլէն ի Սամսոն ամեն 14 օր մի անգամ, չորեքշաբթի օրերը, առաւօտեան ժամ 4ին:

Մեկնելու օրերը՝	
Յուլիսի	6 և 20
Օգոստոսի	3, 17 և 31
Սեպտեմբերի	14 և 28
Հոկտեմբերի	12 և 26
Նոյեմբերի	9 և 23
Դեկտեմբերի	7 և 21

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Ա. ՀԱՑ ԳԻՒՂԱՁՆՈՒՀԻ ՄԸ (*Սպառած*).
Բ. ՀԱՑ ԳԻՒՂԱՑԻ »
Գ. ՄԱՂՄՈՍ ԻՍՐԱՅԷԼԻ »

Դ. ԱԶԱՏՈՒԹԻՒՆ ՊՈՒԼՂԱՐԻՈՑ ԵՒ ԿԱՆՍԱԳՐՈՒԹԻՒՆՔ ՊՈՒԼՂԱՐ ԱՊՍՏԱՄԲԱՊԵՏԱՑ (Պուլղար ազգին իր ազատութիւն ձեռք բերելու համար մէկ գարէ ի վեր արած չանքերի խիստ հետաքրքրաշարժ նկարագրութիւնն է:) (1 ֆր. 10 *սնթմ.*) 1 ֆր. 50 *սթմ.*

Ե. ՀԱՑԱՍՏԱՆԻ ԹՇՈՒԱՌՆԵՐԸ.—(*Հայաստանցիներէն պանդխտութեան տխուր հետեւանքներէն սէկ փոքրիկ պատկերը կը ներկայացուցնէ վիպական կերպով:*) Գին (90 *սնթմ.*) 1 ֆրանգ 20 *սնթմ.*

Զ. ԳԱՄԱՌ ՔԱԹԻՊԱ — ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԸՆԹԵՐՑԱՐԱՆ յետ այբուբենը աւարտելուն (*Մեծանուն հայ բանաստեղծին վերջերս գրած ազատաշունչ ընտիր ոտանաւորներէն 3ը՝ առանձին տետրակով հրատարակուած են*): 50 հատը 2 ֆր. և 30 *սանթիմ*, հատը (5 *սնթմ.*) 10 *սանթիմ*:

Է. ԼԻՆԶԻ ՕՐԷՆԴԸ ՏԱՃԿԱՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ. (*Սպառած*)

Ը. ԹԻՒՐՔԻԱԻ ՀԱՑԵՐՆ ԵՒ ԻՐԵՆՑ ԴՐԱՑԻՆԵՐ (*Թիւրքիոյ Հայերին և իրենց դրացի ազգերի վրայ վիճակագրական և ցեղաբանական ամփոփ և հետաքրքրաշարժ տեղեկութիւններ կը պարունակէ: Թիւրքահայաստանի մէջ բնակող այլ և այլ ազգերէ բնակիչներուն թուին բազդատական մէկ ցուցակն ալ կցուած է տետրակին վերջը:*) Գին 50 *սանթիմ* (35 *սանթիմ*):

Թ. «ԱՐՄԷՆԻԱ»Ի ՅՈՒՇԱՐԱՐ (Արմենիայի Ա տարեշրջանի թիւերը այժմ բոլորովին սպառած և միեւնոյն ժամանակ չատերի հետաքրքրութեան առարկայ դարձած լինելով, այդ շրջանի մէջ Մ. Փորթուգալեանի գրած առաջնորդող յօդուածներէն գէթ 30ի չափ ամփոփուած են Ցուշարարի մէջ որ ութ ծալ դիրքով 124 երեսներէ կը բաղկանայ): (1 ֆրանք): 1 ֆր. 40 *սանթիմ*

Ժ. ՎՐԷԺ (Պուլկարիոյ մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացուցնէ և ցոյց կուտայ թէ Պուլկարներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար): (15 *սնթիմ*) ,20 *սնթմ.*

ԺԱ. ԹՈՄԱՍ ԲՈՑԱՐԻՍ (Յունաստանի մէջ Թիւրքերի արած բարբարոսութիւններէն մի փոքրիկ պատկեր կը ներկայացուցնէ և ցոյց կուտայ թէ Յոյներն ի՛նչպիսի միջոցներու դիմած են իրենց վրէժ լուծելու համար), (0,15*սանթիմ*) ,20 *սանթիմ*:

ՀԱՑՈՑ ՀԱՑՐԵՆԱՍԻՐԱԿԱՆ ՄԻՈՒԹԵԱՆ

Ա. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆ

ՎԱՐԴԱՊԵՏԱՐԱՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԱՏՈՒԹԵԱՆ

Բ. Տպագրութիւն

«Հայոց Հայրենասիրական Միութեան» հրատարակած այս վարդապետարանի մէջ հաւառօտ կերպով բացատրուած է թէ իւրաքանչիւր Հայրենասէր Հայ ի՛նչ փափաքներ պէտք է ունենայ և ի՛նչ պարտքեր ունի կատարելու:

Կը խնդրուի ամեն հայրենասէր Հայէ իրենց շրջանի մէջ տարածել այս տետրակ: Մէկ անգամէն 50 օրինակ ծախու առնողին կը զրկուի 5 ֆրանքով հաշին գինն է 15 *սանթիմ* (Պարսկաստանի Հայերին հաւար 10 *սանթիմ*):

BIBLIOGRAPHIE

Comptabilité Automatique par Arthur PARIS. — Dans un style très humoristique, débarassé de toute aridité scientifique, l'auteur nous offre une méthode nouvelle de Comptabilité commerciale et industrielle qu'on est tout surpris de lire avec la plus grande facilité, presque avec plaisir, et dans tous les cas avec le plus vif intérêt; on ne s'étonne plus alors qu'elle ait valu à son auteur, quelques mois à peine après sa publication, **8 médailles, mention et diplôme d'honneur hors concours,** auprès de diverses Expositions et Académie françaises et étrangères.

Tout y est nouveau et original, et rien n'est emprunté à la comptabilité classique. D'après l'auteur lui-même sa méthode présente sur la partie double les avantages suivants :

1° Suppression de toute étude, et application d'emblée par toute personne même étrangère à la comptabilité ;
2° Diminution des 3/4 du travail comptable ;
3° Impossibilité radicale de toute erreur ou omission ;
4° Contrôle journalier du Grand-Livre par la Caisse ;
5° Inventaire général permanent dressé en un quart d'heure.

Et l'auteur est tellement sûr de ce résultat, qu'il offre de rembourser le prix de la méthode à tout comptable qui y trouvera une contradiction.

Carnet de la Maîtresse de Maison. — Ceci n'est plus un traité, mais le registre lui-même de la Comptabilité de la Maîtresse de Maison ; sous une forme coquette et commode, de l'emploi le plus simple, il fournit constamment à la Maîtresse de Maison, la situation permanente de son budget. — **Prix 1 fr. 75** et **franco 2 fr.** Chez MICHEL-SALZARD, éditeur à Greux-Domremy (Vosges).

ԻՄ ՀԱՅՐԱՍՊԱՆ ԸՆԿԵՐԸ

(Կ. ՊՕԼՍՈՑ ՀԱՑՈՑ ԿԵԱՆՔԷՆ ԱՌՆՈՒԱԾ ՄԻ ԻՐԱԿԱՆ ՎԷՊ)

ԳՐՔԵՑ ԱՊԱԿԱՔԻՊ

Այս հետաքրքրաշարժ գրուած կը ներկայացունէ ընտանեկան տխուր պատկերներէ մին ուր կը տեսնուի թէ անբարոյական մի հայր իւր ապականուած վարքուբարքով որչա՛փ չարիքների պատճառ դարձած է և վերջ ի վերջոյ ինք ալ իւր որդու ձեռքով սպանուած և անհետացած է աշխարհէ: Գին 1 ֆրանգ, (75 *սանթիմ*):

Մ. Փորթուգալեանի հրատարակած գիրքերէն վրայ մասնաւոր զեղչ կը լինի Պարսկաստանի Հայերին համար որոնց կը զրկուի փակագծի մէջ նշանակուած գիներուն:

ԾԱԽՈՒ ԳԻՐՔ ԵՒ ՊԱՏԿԵՐ

Հ. Ց. Վ. Յաւելուածց. Կրթարան անգլիական լեզուի (Անգլիերէն լեզուն դիւրին և գործնական ոճով սովրեցնող քերականութիւն մ'է հրահանգներով մէկտեղ): Ա հատորը կը բաղկանայ 256 երեսէ և Բ հատորը 216 երեսէ. վերջն ալ յաւելուած մը կայ 50 երեսէ բաղկացած որ հայերէն հրահանգներուն անգլիերէն թարգմանութիւնն է: Երկու հատորը միասին՝ 5 ֆր.: (1 *տոլար ամերիկեան*):

Նշանակք Հայաստանեայց. Մայր Հայաստանի պատկերը՝ Հայոց 4 թագաւորութիւնների նշանակներովը մէկտեղ փայլուն թղթի վրայ և կանաչ, կապոյտ և դեղին գոյներով ներկուած: 1 ֆրանգ:

ՏՆՕՐԷՆ—ԽՄԲԱԳԻՐ
Մ. ՓՈՐԹՈՒԳԱԼԵԱՆ

Le Gérant : FÉLIX ENFFANTIN.

ՄԱՐՍԷՅ.

Հայերէն տպարան Մ. Փորթուգալեանի
Marseille. — Imprimerie du Midi, et Papeterie Allées de Meilhan, 44.